

**Չինաստանի Ժողովրդական Հանրապետության  
Գլխավոր մաքսային վարչության հրաման**

թիվ 248

Սույնով իրականացվում է «Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին ՉԺՀ-ի դրույթների» հրապարակումը, որոնք քննարկվել են ընդունվել են 2021 թվականի մարտի 12-ին Գլխավոր մաքսային վարչության ծառայողական խորհրդակցության ժամանակ: Միջոցներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ ուժը կորցնում են Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին Գլխավոր պետական վարչության 2012 թվականի մարտի 22-ի թիվ 145 հրամանով հաստատված եւ 2018 թվականի նոյեմբերի 23-ի Գլխավոր մաքսային վարչության թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված «Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին ՉԺՀ-ի դրույթները»:

Վարչության պետ՝ Նի Յուէֆեն

12 ապրիլի 2021 թվական

## **Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին ՉԺՀ-ի դրույթներ**

### **Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ**

**Հոդված 1.** Սույն դրույթները մշակված են ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու գործընթացն ուժեղացնելու նպատակով՝ «Սննդամթերքի անվտանգության մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Ներմուծվող-արտահանվող ապրանքների տեսչական ստուգման մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Ներմուծվող եւ արտահանվող կենդանիների եւ բույսերի կարանտինի մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Սննդամթերքի եւ այլ մթերքների հսկողության եւ անվտանգության կառավարման ուժեղացման մասին Պետական խորհրդի հատուկ դրույթներին» եւ այլ օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին համապատասխան:

**Հոդված 2.** Սույն դրույթները կիրառվում են Չինաստան սննդամթերք արտահանող՝ սննդամթերքի արտադրությամբ, վերամշակմամբ եւ պահպանմամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների (այսուհետ՝ «սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների») գրանցումը կառավարելու նկատմամբ:

Նախորդ կետում նշված՝ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունները չեն ներառում սննդային հավելումների արտադրությամբ, վերամշակմամբ եւ պահմամբ, ինչպես նաեւ սննդամթերքի հետ կապված մթերքների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները:

**Հոդված 3.** Գլխավոր մաքսային վարչությունը պատասխանատու է ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու համար:

**Հոդված 4.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունները պետք է գրանցման ընթացակարգ անցնեն Գլխավոր մաքսային վարչությունում:

## **Գլուխ 2. Գրանցման պայմանները եւ կարգը**

**Հոդված 5.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցման պայմանները.

1) Գլխավոր մաքսային վարչության կողմից պետության (տարածաշրջանի) սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի համապատասխանության գնահատում եւ ստուգում,

2) արդյունավետ վերահսկողության ներքո պետության (տարածաշրջանի) իրավասու մարմնի հաստատում եւ ստեղծում,

3) սննդամթերքի սանիտարական հսկողության եւ անվտանգության պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծում, պետությունում (տարածաշրջանում) սննդամթերքի օրինական արտադրություն եւ արտահանում, ինչպես նաեւ Չինաստան արտահանվող սննդամթերքի՝ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող Չինաստանի պետական ստանդարտներին եւ օրենսդրական ու վարչաիրավական նորմերին համապատասխանության ապահովում,

4) համապատասխանություն Գլխավոր մաքսային վարչության եւ պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների կողմից սահմանված տեսչական ստուգման եւ կարանտինի պահանջներին:

**Հոդված 6.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցման մեթոդները ներառում են ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների առաջարկությունների եւ ձեռնարկության դիմումի հիման վրա գրանցումը:

Գլխավոր մաքսային վարչությունը սահմանում է գրանցման մեթոդները եւ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա

ձեռնարկությունների դիմումի նյութերը՝ հիմք ընդունելով հումքի աղբյուրների, արտադրության եւ վերամշակման տեխնոլոգիաների վերլուծությունը, սննդամթերքի անվտանգության, սպառողների, սննդի մեջ օգտագործելու մեթոդների եւ այլ գործոնների վերաբերյալ պատմական տվյալների վերլուծությունը, ինչպես նաեւ միջազգային գործելակերպի հետ համակցությունը:

Եթե ռիսկերի վերլուծության տվյալներին կամ ապացույցներին համապատասխան տեղի է ունենում սննդամթերքի որոշակի կատեգորիայի ռիսկերի փոփոխություն, ապա Գլխավոր մաքսային վարչությունը կարող է ճշգրտել գրանցման մեթոդները եւ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների դիմումի նյութերը:

**Չոդված 7.** Ներքոհիշյալ սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումն իրականացվում է Գլխավոր մաքսային վարչության կողմից ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների առաջարկության հիման վրա. միս եւ մսամթերք, բնական թաղանթներ, ջրային արդյունահանման մթերքներ, կաթնամթերք, ծիծեռնակի բներ եւ ծիծեռնակի բներից մթերք, մեղվաբուծության մթերք, ձու եւ ձվամթերք, սննդաճարպեր եւ յուղեր, լցոնած մակարոնային արտադրատեսակներ, սննդային հացահատիկային մշակաբույսեր, աղացած հատիկից եւ ածիկից մթերք, թարմ եւ ջրազրկված բանջարեղեն, ինչպես նաեւ չորացրած հատիկներ, համեմունքներ, ընկույզներ եւ սերմեր, չրեր, սուրճի չբոված հատիկներ եւ կակաոյի հատիկներ, մասնագիտացված դիետիկ մթերքներ եւ բուժիչ-կանխարգելիչ նշանակության սննդամթերք:

**Չոդված 8.** Ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններն իրականացնում են գրանցման համար առաջարկված ձեռնարկությունների ստուգում եւ գրանցման պահանջներին համապատասխանության հաստատումից հետո երաշխավորում են Գլխավոր մաքսային վարչությանը տվյալ ձեռնարկությունների գրանցման համար եւ ներկայացնում են դիմումի հետեւյալ նյութերը՝

- 1) ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների երաշխավորագիր,
- 2) ձեռնարկությունների ցանկ եւ գրանցման դիմումներ,
- 3) ձեռնարկությունների նույնականացման փաստաթղթեր, ինչպիսիք են

ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների կողմից տրամադրված՝ առեւտրային գործունեություն իրականացնելու լիցենզիան;

4) ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների դիմումն այն մասին, որ ձեռնարկությունը համապատասխանում է սույն դրույթների պահանջներին;

5) համապատասխան ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների ստուգման մասին հաշվետվություն:

Անհրաժեշտության դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը կարող է ձեռնարկությունից պահանջել ներկայացնել փաստաթղթեր, որոնք վերաբերում են սննդամթերքի անվտանգության համակարգին եւ սանիտարական հսկողությանը, ինչպիսիք են ձեռնարկության գործարանային տարածքների, արտադրամասերի եւ սառնարանային պահեստների հատակագծերն ու տեխնոլոգիական սխեմաները:

**Հոդված 9.** Սույն դրույթների 7-րդ հոդվածում չթվարկված սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունները պետք է դիմեն Գլխավոր մաքսային վարչություն գրանցման համար՝ ինքնուրույն կամ լիազորված գործակալների միջոցով, եւ ներկայացնեն դիմումի հետեւյալ նյութերը՝

1) ձեռնարկություն գրանցելու վերաբերյալ դիմում.

2) ձեռնարկությունների նույնականացման փաստաթղթեր, ինչպիսին ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների կողմից տրամադրված՝ առեւտրային գործունեություն իրականացնելու լիցենզիան է ,

3) դիմում այն մասին, որ ձեռնարկությունը պարտավորվում է կատարել սույն դրույթների պահանջները:

**Հոդված 10.** Ձեռնարկություն գրանցելու վերաբերյալ դիմումի բովանդակությունը պետք է ներառի ձեռնարկության անվանումը, ձեռնարկության գտնվելու վայրի պետությունը (տարածաշրջանը), արտադրական գործունեություն իրականացնելու, օրինական ներկայացուցիչների, կոնտակտային անձանց հասցեն, կոնտակտային տեղեկատվությունը, ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) կողմից հաստատված գրանցման համարը, գրանցման ենթակա սննդամթերքի կատեգորիաները, արտադրության տեսակը, արտադրական

հզորությունները եւ այլ տեղեկություններ:

**Հոդված 11.** Գրանցման դիմումի նյութերը ներկայացվում են չինարեն կամ անգլերեն: Եթե համապատասխան պետությունները (տարածաշրջանները) Չինաստանի հետ ստորագրել են գրանցման մեթոդների եւ դիմումի նյութերի վերաբերյալ այլ համաձայնագրեր, ապա երկու կողմերն էլ պետք է կատարեն տվյալ համաձայնագրերի պահանջները:

**Հոդված 12.** Ներկայացված նյութերի իսկության, ամբողջականության եւ օրինականության պատասխանատվությունը կրում են ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինները:

**Հոդված 13.** Գլխավոր մաքսային վարչությունը ինքնուրույն կամ համապատասխան մարմինների հանձնարարությամբ կազմակերպում է մասնագետների խումբ՝ գրանցման համար դիմում ներկայացրած՝ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գնահատման եւ ստուգման նպատակով փաստաթղթերի ստուգման, տեսչական տեսաստուգման, տեղում տեսչական ստուգման եւ դրանց համակցությամբ ստուգման միջոցով: Մասնագետների թիվը կազմված է 2 կամ ավելի աշխատակիցներից, որոնք զբաղվում են գնահատմամբ եւ ստուգմամբ:

Ներմուծվող սննդամթերք արտադրող օտարերկրյա ձեռնարկությունները եւ ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինները աջակցություն են ցուցաբերում վերոհիշյալ գնահատման եւ ստուգման գործում:

**Հոդված 14.** Գնահատման եւ ստուգման արդյունքների համաձայն՝ Գլխավոր մաքսային վարչությունը գրանցում է պահանջները բավարարող՝ ներմուծվող սննդամթերք արտադրող օտարերկրյա ձեռնարկությունները եւ դրանց շնորհում է գրանցման համարը՝ Չինաստանում օգտագործելու համար, ինչպես նաեւ գրավոր ծանուցում է ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններին կամ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող համապատասխան օտարերկրյա ձեռնարկություններին. ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող՝ պահանջներին չբավարարող օտարերկրյա ձեռնարկությունները ենթակա չեն գրանցման, ինչի մասին Գլխավոր մաքսային վարչությունը նույնպես գրավոր ծանուցում է ձեռնարկությունների

գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններին կամ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող համապատասխան օտարերկրյա ձեռնարկություններին:

**Հոդված 15.** Չինաստան սննդամթերքի արտահանում իրականացնելիս գրանցված ձեռնարկությունները սննդամթերքի ներքին եւ արտաքին փաթեթվածքների վրա պետք է նշեն Չինաստանում օգտագործելու համար գրանցման համարը կամ ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմնի կողմից հաստատված գրանցման համարը:

**Հոդված 16.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցման գործողության ժամկետը կազմում է 5 տարի:

Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցման ժամանակ Գլխավոր մաքսային վարչությունը սահմանում է գրանցման գործողության ժամկետի սկզբի եւ ավարտի ամսաթվերը:

**Հոդված 17.** Գլխավոր մաքսային վարչությունը հրապարակում է ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող գրանցված օտարերկրյա ձեռնարկությունների ցանկը:

### **Գլուխ 3. Գրանցման կառավարումը**

**Հոդված 18.** Գլխավոր մաքսային վարչությունը ինքնուրույն կամ համապատասխան մարմինների հանձնարարությամբ կազմակերպում է մասնագետների խումբ՝ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների՝ գրանցման պահանջներին համապատասխանության մասով գնահատման եւ ստուգման համար: Մասնագետների թիվը կազմված է 2 կամ ավելի աշխատակիցներից, որոնք զբաղվում են գնահատմամբ եւ ստուգմամբ:

**Հոդված 19.** Գրանցման գործողության ժամկետի ընթացքում գրանցման տեղեկությունների ցանկացած փոփոխության դեպքում ներմուծվող սննդամթերքի

արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունը պարտավոր է դիմումները ներկայացնելու սահմանված ուղիների միջոցով Գլխավոր մաքսային վարչություն փոփոխությունների գրանցման վերաբերյալ դիմում ներկայացնել եւ ներկայացնել հետեւյալ նյութերը՝

1) փոփոխության ենթակա գրանցման վերաբերյալ տեղեկություններ պարունակող ձեւ,

2) համապատասխան տեղեկությունների փոփոխությունը հաստատող փաստաթղթեր:

Փոփոխությունների գրանցումը կատարվում է Գլխավոր մաքսային վարչության կողմից ստուգվելուց հետո:

Արտադրության վայրի, օրինական ներկայացուցիչների կամ գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) կողմից տրամադրված գրանցման համարի փոփոխության դեպքում ձեռնարկությունը պետք է ներկայացնի գրանցման նոր դիմում, ընդ որում, նախկինում Չինաստանում ստացված գրանցման համարն ինքնաբերաբար դառնում է անվավեր:

**Հոդված 20.** Գրանցման գործողության ժամկետն երկարաձգելու անհրաժեշտության դեպքում ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունը պետք է դիմումները ներկայացնելու սահմանված ուղիների միջոցով դիմում ներկայացնի Գլխավոր մաքսային վարչություն գրանցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ գրանցման գործողության ժամկետը լրանալուց առաջ 3-6 ամիսների ընթացքում:

Գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար անհրաժեշտ նյութերը ներառում են՝

- 1) գրանցման ժամկետը երկարաձգելու մասին դիմում,
- 2) գրանցման պահանջներին համապատասխանության մասին դիմում:

Գլխավոր մաքսային վարչությունը երկարաձգում է գրանցման պահանջներին համապատասխանող ձեռնարկությունների գրանցման գործողության ժամկետը 5 տարով:

**Հոդված 21.** Հետեւյալ հանգամանքներից որեւէ մեկն առաջանալու դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը չեղարկում է ներմուծվող սննդամթերքի



արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկության գրանցումը, ծանուցում է ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններին եւ հայտարարում է՝

1) գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով դիմումը ներկայացնելը չի համապատասխանում սույն դրույթներին.

2) գրանցումը չեղարկելու վերաբերյալ դիմումի՝ ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկության կողմից կամավոր ներկայացվելը գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններ.

3) անհամապատասխանությունն սույն դրույթների 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պահանջներին:

**Հոդված 22.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինները պետք է արդյունավետ հսկեն գրանցված ձեռնարկությունները, հորդորեն գրանցված ձեռնարկություններին պահպանել գրանցման պահանջները եւ անհամապատասխանությունների բացահայտման դեպքում անհապաղ հսկողության միջոցներ ձեռնարկեն տվյալ ձեռնարկությունների սննդամթերքի արտահանումը Չինաստան կասեցնելու համար՝ մինչեւ չկատարվեն գրանցման պահանջներին համապատասխանությունն ապահովող փոփոխությունները:

Եթե ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունը բացահայտում է անհամապատասխանությունն գրանցման պահանջներին, ապա տվյալ ձեռնարկությունը պարտավոր է ինքնուրույն կասեցնել սննդամթերքի արտահանումը Չինաստան, եւ անհապաղ միջոցներ ձեռնարկել գրանցման պահանջներին համապատասխանությունն ապահովող ուղղումները կատարելու համար:

**Հոդված 23.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող գրանցված օտարերկրյա ձեռնարկության անհամապատասխանությունը գրանցման պահանջներին բացահայտելու դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը պարտավորեցնում է տվյալ ձեռնարկությանը նշված ժամանակահատվածի ընթացքում կատարել համապատասխան փոփոխություններ եւ կասեցնում է տվյալ ձեռնարկության սննդամթերքի ներմուծումը:

Այն ձեռնարկության կողմից արտադրվող սննդամթերքի ներմուծումը կասեցնելու դեպքում, որի գրանցումն իրականացվել է տվյալ ձեռնարկության գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինների առաջարկությամբ, իրավասու մարմիններն իրականացնում են տվյալ ձեռնարկության վերահսկողություն՝ սահմանված ժամկետում ուղղումների կատարումն ավարտելու նպատակով, եւ Գլխավոր մաքսային վարչությունն են ներկայացնում կատարված ուղղումների վերաբերյալ գրավոր եզրակացություն, ինչպես նաեւ գրանցման պայմաններին տվյալ ձեռնարկության համապատասխանության վերաբերյալ գրավոր դիմում:

Եթե տեղի է ունեցել այն ձեռնարկության կողմից արտադրվող սննդամթերքի ներմուծման կասեցում, որը գրանցման դիմում է ներկայացրել ինքնուրույն կամ լիազորված գործակալների միջոցով, ապա տվյալ ձեռնարկությունը պետք է ավարտի ուղղումների կատարումը սահմանված ժամկետում եւ Գլխավոր մաքսային վարչությունն ներկայացնի կատարված ուղղումների վերաբերյալ գրավոր եզրակացություն, ինչպես նաեւ գրանցման պայմաններին համապատասխանության վերաբերյալ գրավոր դիմում:

Համապատասխան ձեռնարկությունների սննդամթերքի ներմուծման վերականգնումն իրականացվում է Գլխավոր մաքսային վարչության կողմից՝ ձեռնարկության կողմից կատարված ուղղումներն ստուգելուց հետո:

**Հոդված 24.** Հետեւյալ հանգամանքներից որեւէ մեկն առաջանալու դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը չեղարկում է ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող գրանցված օտարերկրյա ձեռնարկության գրանցումը եւ հայտարարում է՝

1) ներմուծվող սննդամթերքի անվտանգությանը վերաբերող խոշոր միջադեպեր, որոնք առաջացել են անմիջապես ձեռնարկության պատճառով.

2) տեսչական ստուգման կամ կարանտինի ընթացքում խնդիրների բացահայտում, որոնք կապված են Չինաստան արտահանվող սննդամթերքի անվտանգության հետ, դրա հետ մեկտեղ առկա են ծանրացնող հանգամանքներ.

3) լուրջ խնդիրների բացահայտում, որոնք կապված են ձեռնարկությունների սննդամթերքի անվտանգության սանիտարական հսկողության հետ, ինչի հետ կապված անհնար է երաշխավորել, որ Չինաստան արտահանվող սննդամթերքը

համապատասխանում է անվտանգության սանիտարական պահանջներին.

4) ուղղումները կատարելուց հետո ձեռնարկությունը նախկինի նման չի համապատասխանում գրանցման պահանջներին.

5) կեղծ նյութեր տրամադրելը կամ համապատասխան տեղեկատվություն թաքցնելը.

6) կրկնակի ստուգում եւ միջադեպերի քննություն անցկացնելու գործում Գլխավոր մաքսային վարչության հետ համագործակցությունից հրաժարվելը.

7) գրանցման համարը վարձով կամ փոխառությամբ տալը, փոխանցելը, վերավաճառելը կամ անօրինական օգտագործելը:

#### **Գլուխ 4. Ծանոթագրություններ**

**Հոդված 25.** Եթե միջազգային կազմակերպությունն ուղարկում է համաճարակաբանական իրավիճակի առաջացման վերաբերյալ ծանուցումը Չինաստան սննդամթերք արտահանող պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններ, կամ համապատասխան սննդամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի ընթացքում առաջանում են լուրջ խնդիրներ, ինչպիսիք են համաճարակային իրավիճակը կամ միջադեպերը հանրային առողջապահության ոլորտում, Գլխավոր մաքսային վարչությունը հայտարարում է տվյալ պետությունից (տարածաշրջանից) համապատասխան սննդամթերքի ներմուծումը կասեցնելու մասին եւ չի ընդունում տվյալ պետության (տարածաշրջանի) սննդամթերքի արտադրությամբ զբաղվող համապատասխան ձեռնարկությունների գրանցման մասին դիմումները:

**Հոդված 26.** Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գտնվելու վայրի պետության (տարածաշրջանի) իրավասու մարմիններ ասելով հասկանում ենք պաշտոնական մարմիններ, որոնք պատասխանատու են ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գտնվելու վայրի պետությունում (տարածաշրջանում) սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների

անվտանգության սանիտարական վերահսկողության համար:

**Հոդված 27.** Սույն դրույթների մեկնաբանության համար պատասխանատվություն է կրում Գլխավոր մաքսային վարչությունը:

**Հոդված 28.** Սույն դրույթներն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ ուժը կորցնում են Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին Գլխավոր պետական վարչության 2012 թվականի մարտի 22-ի թիվ 145 հրամանով հաստատված եւ 2018 թվականի նոյեմբերի 23-ի Գլխավոր մաքսային վարչության թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված «Ներմուծվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին ՉԺՀ-ի դրույթները»: